ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## «ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.02.2019թ.

ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Խաչիկ Կարապետյան – Հանձնաժողովի նախագահի խորհրդական,

**Հանձնաժողովի անդամներ՝**

Նանե Քալաշյան - Հանձնաժողովի վերահսկողության վարչության ստուգումների բաժնի առաջատար մասնագետ,

Հայկ Սարգսյան - Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ,

Գարիկ Մկրտչյան - Հանձնաժողովի պարետ,

Թոմաս Զուլալյան – Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող-համակարգչային ցանցի ադմինիստրատոր,

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Տիգրան Սաֆարյան – Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ:

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ

(Խ. Կարապետյան)

1. Ընդունել ի գիտություն, որ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով՝ հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի և մասնակիցների հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2019 թվականի փետրվարի 22-ին ներկայացվել է եզրակացություն համաձայն, որի 1-ին տեղ զբաղեցրած «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (13.02.2019թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

1.1 «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 19.02.2019թ.-ի թիվ 2 որոշմամբ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից և սահմանված ժամկետում ներկայացրել՝ հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը:

1.2 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական եզրակացությունը, ինչպես նաև հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը, առաջին տեղ զբաղեցրաց մասնակցին կառաջարկվի կնքել պայմանագիր:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Խ. Կարապետյան

Անդամներ՝ _____ Հ. Սարգսյան

_____ Թ. Զուլալյան

_____ Գ. Մկրտչյան

_____ Ն. Քալաշյան

Քարտուղար՝ _____ Տ. Սաֆարյան